ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳԸ:

Գենդերային մեյնսթրիմինգը համաշխարհայնորեն ընդունված ռազմավարություն է՝ ուղղված գենդերային իրավահավասարությանը և կանանց զորացմանը: Այն կանանց և տղամարդկանց շահերը և խնդիրները քաղաքականություններում, ծրագրերում և նախագծերում ընդգրկելու գործընթացն է, որպեսզի քաղաքականությունների մշակման բոլոր մակարդակներում և բոլոր փուլերում սովորաբար ներգրավված գործիչները խրախուսեն գենդերային իրավահավասարությունը (Եվրոպային խորհուրդ, 1998):

Գենդերային մեյնսթիմինգը ներառում է, գենդերային տեսանկյան ընդգրկումը տարբեր քաղաքականությունների բովանդակություններում, ինչպես նաև տղամարդկանց և կանանց ներկայացվածության խնդրի լուծումը համապատասխան քաղաքականության ոլորտում:

Գենդերային իրավահավասարությանը օժանդակելու և այն խթանելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը գենդերային մեյնսթրիմինգին հավատարիմ լինելն է: Գենդերային մեյնսթրիմինգի նպատակն է հավաստիանալ, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ ունեն ռեսուրսների հասանելիության և որոշումների կայացմանը նպաստելու հավասար իրավունքներ և հնարավորություններ:

Ի՞ՆՉ Է «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-Ն հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայությունը» պահանջարկաստեղծ աջակցություն է տրամադրում Արևելյան գործընկերության[1] ծրագրի կառավարություններին[2] և ԵՄ պատվիրակություններին՝ տարածված գենդերային խնդիրների վերաբերյալ քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման հարցերում՝ ապահովելու կանանց և տղամարդկանց համար գործուն արդյունքի մատակարարումը:

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

Սույն ամփոփագիրը կարող է գործածել իրավական ակտեր, քաղաքականություններ, ծրագրեր և նախագծեր մշակող ցանկացած անձ (կառավարական հաստատությունների, ԵՄ պատվիրակությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատակիցներ և այլ միջազգային զարգացման գործընկերներ), ում նպատակը Արևելյան գործընկերության երկրների և ոչ միայն այդ երկրների մարդկանց օգտակար լինելն է: Այն կարող է նաև գործածվել այդ երկրների իրավական շրջանակներում, քաղաքականության մշակման և ծրագրերի պատրաստման հարցերում հետազոտություններ անցկացնող և/կամ զեկուցող հետազոտողների, ակադեմիական համայնքի և լրատվամիջոցների կողմից:

[1] Բելառուսում Բարեխփոումների աջակցության ծառայությունը օժանդակում է միայն ԵՄ պատվիրակությանը

[2] Արևելյան գործընկերությունը համատեղ նախաձեռնություն է, որում ներգրավված են ԵՄ-ն, դրա անդամ պետությունները և Արևելաեվրոպական վեց գործընկեր երկրները՝ Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան

NIRAS
իրականացվում է niras-ի կողմից

Սույն հրատարակությունը ֆինասնավորել է Եվրոպական Միությունը: Դրա բովանդակության միակ պատասխանատուն NIRAS-ն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական Միության տեսակետը:

ԻՆՉՈՒ՞ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳԸ ԿԱՐԵՎՈՐ:

Գենդերային մեյնսթրիմինգը ներառական ռազմավարություն է, որի նպատակն է ներառել բոլոր մարդկանց կարիքները քաղաքականություններում և ծրագրերում՝ տղամարդկանց և կանանց, տղաների և աղջիկների: Գենդերային մեյնսթրիմինգի շնորհիվ հանրային միջամտությունները դառնում են ավելի արդյունավետ, իսկ անհավասարությունները չեն հավերժացվում:

Գենդերային մեյնսթրիմինգը նպաստում է ավելի բարձրորակ, ավելի համապատասխան քաղաքականության մշակման և օրենսդրական աշխատանքի, քանի որ հնարավորություն է տալիս, որ քաղաքականությունները և ծրագրերը ավելի արդյունավետորեն արձագանքեն բոլոր քաղաքացիների կարիքներին: Ավելի լավ արդյունքները մեծացնում են կանանց և տղամարդկանց բարեկեցությունը և ստեղծում սոցիալապես ավելի արդար և կայուն հասարակություն:

Այս մոտեցումը նաև հնարավոր է դարձնում ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխումը, և հակառակը, բոլոր շահառուների կարիքները և հանգամանքներն ամբողջությամբ հաշվի չառնող որոշումները պատճառ են հանդիսանում անտեղի որոշումների և հանրային միջոցների անհամապատասխան բաշխման:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ԳԵՆԴԵՐԸ ՀԻՄՆՈՒՂԻ (ՄԵՅՆՍԹՐԻՄ) ԴԱՐՁՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ/ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Ծրագրային մակարդակում գենդերային մեյնսթրիմինգը կարելի է կիրառել ողջ ծրագրի շրջափուլում՝ հետևելով այս քայլերի հերթականությանը.

1

Քայլ առաջին. Գենդերային վերլուծություն

Գենդերային վերլուծության նպատակը գենդերազգայուն օրենսդրական և քաղաքականության մշակման և ծրագրի մշակման համար փաստերի հավաքագրումն է: Գենդերային վերլուծությունը գենդերային մեյնսթրիմինգի վճռական մեկնարկային կետն է: Այն համատեքստային վերլուծության անքակտելի մաս է, որը բնորոշում է՝ ինչպես և ինչու են խնդիրները տարբեր ձևերով և անհամաչափորեն ազդում կանանց և տղամարդկանց վրա ինչ-որ կոնկրետ համատեքստներում կամ զարգացման սեկտորում և այդ մարտահրավերներին անդրադառնալու ինչ տարբերակներ գոյություն ունեն: Այս փուլի մասին ավելին տեղեկանալու համար տես «ԵՄ-ն հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայության» գենդերային վերլուծության մասին տեղեկատվական ամփոփագիրը:

2

Քայլ երկրորդ. Ծրագրի պլանավորում

Այս փուլում ներառված են գենդերային վերլուծության եզրահանգումները, որոնք լրացնում են ծրագրի պլանավորումը: Ծրագրի պլանավորումը ներառում է առաջնային խնդիրների ընտրությունը, թիրախային խմբերը և լուսաբանումը, ինչպես նաև դրանց ընդգրկումը ծրագրի վերջնարդյունքների, ցուցիչների և միջամտության մեթոդների տեսանկյունից:

3

Քայլ երրորդ. ռեսուրսների հատկացում

Գենդերային մեյնսթրիմինգի գործընթացում բավականաչափ ռեսուրսների տեղաբաշխման ապահովումը վճռորոշ է, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն հասցեագրել գենդերային իրավահավասարության նկատառումները ծրագրի փուլում:

4

Քայլ չորրորդ. ծրագրի իրականացում

Այս քայլը ներառում է ծրագրերն իրականացնելու նպատակով բազմասեկտորային և միջգիտակարգային գործընկերության խթանում՝ մի շարք շահագրգիռ կողմերի՝ ներառյալ կանանց կազմակերպությունների ներգրավմամբ:

5

Քայլ հինգերորդ. մշտադիտարկում և գնահատում
Արդյունավետ մշտադիտարկումը և գնահատումը մեզ հնարավորություն են տալիս կառուցել գենդերային իրավահավասարությանն առնչվող փաստերի բազա՝ ռազմավարական որոշումների կայացման համար, թույլ են տալիս կատարել զարգացման ծրագրերի ավելի լավ պլանավարում և, գենդերային իրավահավասարության իրենց հանձնառություններում, հաշվետու դարձնել ինստիտուտներին (ՄԱԿ-Կանայք, 2014):

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍՐԻՄԻՆԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ԵՄ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Միջազգային իրավական շրջանակը ճանաչում է գենդերային մեյնսթրիմինգը՝ ներառյալ մարդու իրավունքների և գենդերային իրավահավասարության միջազգային գործիքակազմը: Արևելյան գործընկերության երկրները հանձնառություն են վերցրել հետևել այնպիսի շրջանակի, ինչպիսիք են.

1. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիան (1979թ.)
2. Պեկինի հռչակագիր և գործողությունների ծրագիր (1995թ.)
3. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձև և ԱԽ լրացուցիչ ինը դրույթները
4. Կայուն զարգացման օրակարգ 2030 և դրա 17 Կայուն զարգացման նպատակներ

Գենդերային մեյնսթրիմինգը դարձել է Եվրոպական Միության (ԵՄ) քաղաքական օրակարգի կարևոր խնդիր: ԵՄ-ն ցուցադրել է գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու իր հանձնառությունը բազմաթիվ փաստաթղթերի միջոցով: ԵՄ-ի մակարդակով գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելը ԵՄ ինստիտուտների պատասխանատվությունն է, մինչդեռ ազգային մակարդակով՝ ԵՄ անդամ պետությունների կառավարությունների:

ԵՄ Գենդերային իրավահավասարություն 2020-2025-ներկայացնում է մինչև 2025 թվականը գենդերային տեսանկյունից իրավահավասար Եվրոպա ունենալու հարցում զգալի առաջընթաց արձանագրելու քաղաքականության նպատակները և գործողությունները: Նպատակն է ունենալ Միություն, ուր կանայք և տղամարդիկ, տղաները և աղջիկները՝ իրենց ողջ բազմազանությամբ, ազատ լինել ընթանալու կյանքի իրենց ընտրած ճանապարհով, ունենալ բարգավաճելու հավասար հնարավորություններ և կարողանան հավասարապես մասնակցել և առաջնորդել Եվրոպական հասարակությունը: Ռազմավարության հիմնանպատակն է վերջ դնել գենդերային բռնությանը, գենդերային կարծրատիպերին մարտահրավեր նետելը, աշխատաշուկայում գենդերային տարբերությունների վերացումը, տնտեսության տարբեր ոլորտներում հավասար մասնակցության հասնելը, վճարների և թոշակների գենդերային տարբերությունները հասցեագրումը, խնամքի գենդերային տարբերությունը վերացնելը, և որոշումների կայացման և քաղաքականության մեջ գենդերային հավասարակշռության հասնելը: Ռազմավարությունը հետևում է գենդերային մեյնսթրիմինգի կրկնակի մոտեցման՝ համակցված թիրախավորված գործողություններով, իսկ միջսեկտորայնությունը դրա իրականացման հորիզոնական սկզբունքն է:

Թեև ԵՄ Գենդերային իրավահավասարություն 2020-2025-ը իր կիզակետում է պահում գործողությունները ԵՄ-ի ներսում, այն համահունչ է գենդերային իրավահավասարության և կանանց զորացման ԵՄ-ի արտաքին քաղաքականության հետ:

Գենդերային իրավահավասարության և կանանց հզորացման գործողությունների պլան III-ը (GAP III, 2020-2025) նպատակ ունի արագացնելու կանանց և աղջիկների զորացման առաջընթացը: Պլան III-ը առաջ է քաշում փոխակերպված և միջսեկտորային մոտեցումը, ինչպես նաև գենդերային մեյնսթրիմը բոլոր քաղաքականություններում և գործողություններում: ԵՄ-ն հանձն է առել իր արտաքին գործողությունների առնվազն 85%-ում գենդերային հավասարությունը որպես սկզբունք կամ էական ձգտում ապահովելը: ԵՄ-ն հանձն է առել «Արևելյան գործընկերություն. վերականգնման, դիմակայունության և բարեփոխման օրակարգի» միջոցով օժանդակել Արևելյան գործընկեր երկրներին՝ բոլոր բնագավառներում գենդերային իրավահավասարությունը և կանանց զորացումը խթանելու իրենց ջանքերում և,

գենդերային մեյնսթրիմինգի և համակարգված գենդերազգայուն բյուջետավորման միջոցով, աջակցել ռեսուրսների հավասար հասանելիությունն ապահովելուն:

ԴՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Չնայած որ գենդերային իրավահավասարությունը պաշտոնապես ամփոփված է Արևելյան գործընկերության երկրների սահմանադրություններում և իրավական համակարգերում, գենդերային մեյնսթրիմինգի բացակայությունը թույլ չի տալիս ապահովել նշանակալի գենդերային իրավահավասարություն: Հետևաբար, ԵՄ-ի՝ հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայությունը օժանդակում է Արևելյան գործընկերության երկրներում գենդերային մեյնսթրիմինգի ծրագրերի և բարեփոխումների անցկացմանը սկզբնավորման օրվանից ի վեր: Մի քանի դրական օրինակ ստորև.

Հայաստան. Բարեփոխումների ծառայությունը աջակցել է գենդերային մեյնսթրիմինգին՝ Հայաստանի Հանրապետության Տնտեսական արձագանքման ծրագրին և գործողությունների պլանին, Հայաստանի 2021-2027 թթ Բազմամյա ինդիկատիվ ծրագրին և Հայաստանում ԵՄ պատվիրակության Կրթության գործողությունների մանրապատճենին:

Ադրբեջան. Բարեփոխումների ծառայությունը աջակցել է արդարադատության ոլորտում գենդերային մեյնսթրիմինգի բարեփոխումներին՝ վերապատրաստելով Արդարադատության նախարարության և կալանավայրերի աշխատակիցներին, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության Արդարադատության ակադեմիային՝ կալանավայրերի գենդերազգայուն կառավարման և կին կալանավորների՝ հասարակությունում վերաինտեգրման հարցերում:

Վրաստան. Բարեփոխումների ծառայությունը անցկացրել է Վրաստանի «Սննդի կորստի և վատնման կրճատման և սննդի նվիրատվության մասին» օրենքի նախագծի Գենդերային ազդեցության գնահատում (ԳԱԳ)՝ նոր օրենսդրության մեջ գենդերային մեյնսթրիմինգին աջակցելու համար:

Մոլդովա. Բարեփոխումների ծառայությունը ներկայումս աջակցություն է իրականացնում Մոլդովայի Պաշտպանության նախարարությանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի հիման վրա նոր Գործողությունների պլան մշակելու հարցում:

Ուկրաինա. Բարեփոխումների ծառայությունը օգնել է կազմել գենդերային մեյնսթրիմինգի փորձագետների 40 հոգանոց խումբ՝ Ուկրաինայի վերակագնման պլան 2022-2032 ծրագրի շրջանակներում: Խումբն աշխատել է և գենդերներ ընդգրկել Ուկրաինայի Ազգային խորհրդի ներքո գործող 24 սեկտորների աշխատանքային խմբերի միջև: Գենդերային մեյնսթրիմինգային մոտեցումն ընդգրկվել է քաղաքականությունների հինգ ամփոփագրերում և վերլուծական նյութերում՝ պատրաստված 2022 թ հուլիսին Լուգանոյում անցկացրած Ուկրաինայի Վերականգնման համաժողովի համար՝ հետևյալ կարևոր թեմաներով՝ տնտեսական վերականգնում, սոցիալական վերականգնում, ենթակառուցվածքների վերականգնում, խելացի ճարտարապետական վերականգնում և շրջակա միջավայրի վերականգնում:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

- ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության՝ բարեփոխումների աջակցության ծառայության մասին
- Գենդերային հավասարության գրադարան
- EU Neighbours East կայք

Այցելեք Գենդերային հավասարության գրադարան:

© Եվրոպական միություն 2023